Գիտություն

ՄԱՅԻՍ
№ 5
(376)
2023 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ-ում միջազգային գիտաժողովով նշանավորվեց աշխարհահռչակ գիտնական Յուրի Հովհաննիսյանի 90-ամյակը

Սույն թվականի ապրիլի 25-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Գերծանր միջուկներ և ատոմներ» միջազգային գիտաժողովը՝ նվիրված աշխարհահռչակ հայազգի գիտնական, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Մենդելեևի անվան ՅՈՒՆԵՍԿՕ-Ռուսաստան միջազգային մրցանակի դափնեկիր, ՌԴ Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջուկային ռեակցիաների լաբորատորիայի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Յուրի Հովհաննիսյանի 90-ամյակին:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը շնորհավորեց Յուրի Հովհաննիսյանի հոբելյանը՝ մաղթելով առողջություն և անսպառ եռանդ: ՀՀ ԳԱԱ նախագահը ողջունեց գիտաժողովի մասնակիցներին. «Այսօր առավել քան արդիական է «Գիտությունը միավորում է ազգերին» կարգախոսը: Հանդիպման վայրը խորհրդանշական է: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան միավորում է բազմաթիվ երկրների գիտնականների: Մենք բարձր ենք գնահատում այն փաստը, որ Յուրի Հովհաննիսյանը մեր ակադեմիայի անդամ է: Հպարտ ենք, որ Յուրի Հովհաննիսյանի անունն է կրում Մենդելեևի պարբերական աղյուսակի 118-րդ տարրը, և վերջերս նա դարձել է Մենդելեևի անվան ՅՈՒՆԵՍԿՕ-Ռուսաստան միջազգային մրցանակի դափնեկիր՝ հիմնարար գիտությունների բնագավառում ձեռքբերումների համար:

Գիտությունների ազգային ակադեմիան, Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիան, Երևանի պետական համալսարանը, Հայ-Ռուսական համալսարանն ակտիվորեն համագործակցում են Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ: 1992 թվականից ի վեր շուրջ 20 հայ հետազոտողներ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտում պատրաստել և պաշտպանել են իրենց ատենախոսությունները»:

ՀՀ ԳԱԱ նախագահը Յուրի Հովհաննիսյանին և գիտաժողովի մասնակիցներին հրավիրեց մասնակցելու 2023 թվականի հոկտեմբերին կայանալիք ՀՀ ԳԱԱ-ի 80-ամյակի տոնակատարությանը:

Յուրի Հովհաննիսյանին շնորհավորեցին Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը և գիտաժողովի մասնակիցները:

Յուրի Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց հայաստանյան գործընկերներին գիտաժողովի կազմակերպման համար: Նա նշեց, որ գերծանր միջուկների ֆիզիկայի ոլորտի գիտնականները տարին մեկ անգամ հանդիպում են՝ քննարկելու արվածն ու նախանշելու ծրագրերը: 2019 թվականին գիտնականները հավաքվել են Տոկիոյում, 2021 թվականին՝ Դուբնայում, 2022 թվականին՝ Սանկտ Պետերբուրգում: 2023 թվականին այդ հանդիպումն անցկացվում է Երևանում:

Յուրի Հովհաննիսյանը ներկայացրեց իր բազմամյա գիտական գործունեության արդյունքները՝ անդրադառնալով միջուկային ֆիզիկայի բնագավառի մարտահրավերներին ու գերծանր տարրերի սինթեզի պատմությանը:

Գիտաժողովի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ում անցկացվում է «Մեծ գիտություն» լուսանկարչական ցուցահանդեսը, որտեղ ներկայացված են Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի բացահայտումներն ու ձեռքբերումները:

Հոբելյանական գիտաժողովին մասնակցում են առաջատար գիտնականներ ԱՄՆ-ի Նոտր Դամի համալսարանից, Շվեյցարիայի Փոլ Շերրերի ինստիտուտից, Իսրայելի Թել Ավիվի համալսարանից, Ռուսաստանի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտից, Լեհաստանի միջուկային հետազոտությունների միջազգային կենտրոնից: Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մինչև ապրիլի 29-ը ներառյալ:

«Գերծանր միջուկներ և ատոմներ» միջազգային գիտաժողովը կազմակերպել են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, Երևանի պետական համալսարանը և Տեսական և կիրառական ֆիզիկայի միջազգային միությունը (IUPAP):

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

«OTHA-Spring-2023» միջազգային գիտաժողովը ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտում համախմբել է մի շարք երկրների առաջատար մաթեմատիկոսների

Սույն թվականի ապրիլի 19-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մաթեմատիկայի ինստիտուտում մեկնարկեց «Օպերատորների տեսություն և հարմոնիկ անալիզ» թեմայով «OTHA-Spring-2023» միջազգային գիտաժողովը: Այն նվիրված է ՀՀ ԳԱԱ ստեղծման 80-ամյակին:

Գիտաժողովին մասնակցում են առաջատար մաթեմատիկոսներ ԱՄՆ-ից, Գերմանիայից, Իտալիայից, Իսպանիայից, Ռուսաստանից, ԱՄԷ-ից, Մեքսիկայից, Իսրայելից, Պորտուգալիայից, Ղազախստանից, Հայաստանից:

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի տնօրեն Ռաֆիկ Արամյանը նշեց, որ գիտաժողովն ավանդաբար անցկացվում է Դոնի Ռոստովում (ՌԴ): Այս տարի այն որոշվեց անցկացնել Հայաստանում՝ խորացնելու համագործակցությունը մաթեմատիկայի բնագավառում:

«Սա շատ լավ հնարավորություն է՝ ամրապնդելու մեր կապերն արտասահմանյան գիտական կենտրոնների հետ և ստեղծելու նոր համագործակցություններ: Սա հատկապես կարևոր է երիտասարդ մաթեմատիկոսների համար, ովքեր այս միջոցառման շնորհիվ ծանոթանում են առաջատար մաթեմատիկական կենտրոններում կատարվող հետազոտություններին»,- ասաց ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի տնօրեն Ռաֆիկ Արամյանը:

«Այսօր մեր թիվ մեկ խնդիրը երիտասարդ կադրերի պատրաստումն է, և ես հույս ունեմ, որ նման հեղինակավոր միջոցառումների արդյունքում Հայաստանում գիտական ոլորտն ավելի գրավիչ կդառնա երիտասարդների համար»,- նշեց ՀՀ նախագահի խորհրդական Վահրամ Դումանյանը:

Հարավային դաշնային համալսարանի տարածաշրջանային գիտակրթական մաթեմատիկական կենտրոնի տնօրեն, «Journal of Mathematical Sciences» (Series A) գիտական ամսագրի գլխավոր խմբագիր, պրոֆեսոր Ալեքսեյ Կարապետյանցը շեշտեց համագործակցության զարգացման կարևորությունը: Նա նշեց, որ նախատեսվում է գիտաժողովի արդյունքներին նվիրված հրապարակում «Journal of Mathematical Sciences» ամսագրում, որը բացի անգլերենից կլինի նաև հայոց լեզվով:

Գիտաժողովի շրջանակներում միջազգային հրատարակչական «Springer» ընկերությունը կազմակերպել է մասնագիտական գրքերի ցուցադրություն: Գիտաժողովի աշխատանքները կշարունակվեն ապրիլի 20-ին ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտում:

Գիտաժողովի կազմակերպիչներն են ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտը և ՌԴ հարավային դաշնային համալսարանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Երևանի բուսաբանական այգում բացվեց աշխարհահռչակ բուսաբան Արմեն Թախտաջյանի կիսանդրին

Սույն թվականի ապրիլի 28-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի Երևանի բուսաբանական այգում տեղի ունեցավ աշխարհահռչակ բուսաբան, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի հիմնադիր Արմեն Թախտաջյանի կիսանդրու բացումը:

«Արմեն Թախտաջյանի կիսանդրու շուրջը ստեղծված պուրակում աճեցնելու ենք գիտնականի անունը կրող բույսեր: Այս վայրը գիտության հանրայնացման, Բուսաբանական այգու գիտականությունը ներկայացնելու վայր է դառնալու»,- ասաց ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Գասպարյանը:

Միաժամանակ այգում տեղի ունեցավ Բուսաբանական թանգարանի և Մոլեկուլային կենսաբանության լաբորատորիայի բացման արարողությունը: Թանգարանում ներկայացված են Հայաստանի ժամանակակից բուսատեսակներն ու բրածո բույսերի նմուշները: «Մոլեկուլային կենսաբանության լաբորատորիայում, որը ստեղծվել է Գիտության կոմիտեի դրամաշնորհով, անցկացվելու են կարգաբանական հետազոտություններ, իսկ Բուսաբանական թանգարանը ներառված է հնէաբուսաբանության բաժնում, որն Արմեն Թախտաջյանի հիմնած դպրոցի մասնիկն է: Թախտաջյանի ստեղծած դպրոցը պետք է զարգանա, և նրա աշակերտները պետք է իրենց փորձը փոխանցեն երիտասարդներին»,- ասաց Արսեն Գասպարյանը:

«Խորհրդանշական է, որ մենք մասնակցում ենք նաև ինստիտուտում մոլեկուլային կենսաբանության լաբորատորիայի բացմանը: Առանց մոլեկուլային մոտեցման այժմ որևէ կենդանի օրգանիզմի կարգաբանություն անհնար է պատկերացնել: Արմեն Թախտաջյանն իր կյանքի ավարտից առաջ կարողացավ իր վերջին մենագրությունում բույսերի կարգաբանության մեջ ներդնել մոլեկուլային մեթոդների կիրառման արդյունքները»,- ասաց ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը:

Միջոցառման պատվավոր հյուրն էր Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Մենդելեևի անվան ՅՈՒՆԵՍԿՕ-Ռուսաստան միջազգային մրցանակի դափնեկիր, ՌԴ Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջուկային ռեակցիաների լաբորատորիայի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Յուրի Հովհաննիսյանը, ում 90-ամյա հոբելյանն օրերս նշվեց ՀՀ ԳԱԱ-ում: Բուսաբանական այգում տնկվեց Յուրի Հովհաննիսյանի հոբելյանին նվիրված անվանական ծառ:

«Արմեն Թախտաջյանը կարգավորել է բուսական աշխարհի էվոլյուցիոն պատկերը՝ ելնելով բույսերի ծագման և զարգացման օրինաչափություններից: Յուրի Հովհաննիսյանը գնացել է դեպի մատերիայի առանձին տարրերը, կարգավորել է ատոմային մակարդակով նրանց օրինաչափությունները և ստեղծել է նոր էլեմենտներ: Այն, որ գիտության հսկա Յուրի Հովհաննիսյանն այսօր ակտիվ գործում է, խորհրդանշում է մտքի էվոլյուցիայի պարույրի, մեր ժողովրդի մտածելակերպի վերելքի շարունակականությունը»,- ասաց Ռուբեն Հարությունյանը:

«Արմեն Թախտաջյանի կենսագրությունը կարող է ձեռնարկ դառնալ բոլոր այն երիտասարդների համար, ովքեր ցանկանում են զբաղվել գիտությամբ: Թախտաջյանը փայլուն ուսուցիչ էր: Նրա աշակերտները եղել են առնվազն երեք սերնդի բուսաբաններ՝ սկսած նախորդ դարի 1940-ական թվականներից մինչև 2000-ականների սկիզբ»,- ասաց ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժնի վարիչ Ալլա Հայրապետյանը:

Միջոցառմանը մասնակցեց Արմեն Թախտաջյանի թոռը՝ Հայկ Թախտաջյանը: «Արմեն Թախտաջյանի մասին ամերիկյան մամուլում գրել են՝ «King of Botany»: Հույս ունեմ՝ կիսանդրու բացումը կնպաստի, որ ոչ միայն մասնագիտական շրջանակներում, այլև մեր հասարակության լայն շերտերը ևս ճանաչեն նրա անունը և գործը»,- ասաց Հայկ Թախտաջյանը:

ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Գասպարյանը շնորհակալագրեր հանձնեց կիսանդրու հեղինակ, քանդակագործ Արթուր Ավետիսյանին, ինստիտուտի աշխատակիցներ Աշոտ Բոգդանյանին, Նորիկ Շատոյանին, տարածքի բարեկարգմանն աջակցած «Ֆենսինգ Սիսթեմս» ընկերությանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ում նշվեց ականավոր ռուս կոմպոզիտոր Սերգեյ Ռախմանինովի ծննդյան 150-ամյակը

Սույն թվականի մայիսի 3-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Ռախմանինով. ռուս կոմպոզիտոր, աշխարհի քաղաքացի» խորագրով կլոր սեղանը՝ նվիրված ականավոր կոմպոզիտոր, դաշնակահար և դիրիժոր Սերգեյ Ռախմանինովի ծննդյան 150-ամյա հոբելյանին:

Միջոցառումը բացեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը:

Ներկաներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: «Սերգեյ Ռախմանինովն իր հանճարեղ ստեղծագործություններով հարստացրել է ոչ միայն ռուս, այլ նաև համաշխարհային մշակույթը: Ռախմանինովն իր ստեղծագործություններում անդրադարձել է նաև հայ պոեզիային, մասնավորապես Ավետիք Իսահակյանի: Ռուս և հայ ժողովուրդների բարեկամությունը դարերի պատմություն ունի, և այդ փոխհարաբերություններում հատուկ տեղ են զբաղեցնում գիտությունը և մշակույթը, հատկապես երաժշտական արվեստը: Այդ փոխհարաբերություններն այսօր զարգանում են, և այս միջոցառումը կնպաստի հայ-ռուսական գիտական և մշակութային կապերի ամրապնդմանը»,- ասաց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

«Սիմվոլիկ է, որ այսօրվա կլոր սեղանն անցկացվում է Հայաստանում: Նման միջոցառումներն իրենց ներդրումն են ունենում հայ-ռուսական կապերի զարգացման գործում, նաև մեր ժողովուրդների միջև սերտ կապերի, ընդհանուր մշակութային կոդի և դարավոր ընկերության ապացույց են»,- ասաց Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի ղեկավար Վադիմ Ֆեֆիլովը:

Ելույթներով հանդես եկան Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը և Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը՝ ընդգծելով Սերգեյ Ռախմանինովի դերը համաշխարհային մշակույթում և կարևորելով հայ-ռուսական մշակութային համագործակցությունը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանը և Ռուսաստանի երաժշտության ազգային թանգարանի գլխավոր տնօրեն Միխայիլ Բրիզգալովը կնքեցին համագործակցության համաձայնագիր՝ համատեղ գիտական և մշակութային ծրագրերի իրականացման նպատակով:

«Այսօր մենք թևակոխում ենք համագործակցության նոր փուլ: Սա մեր գիտական, մշակութային նոր ճանապարհի սկիզբն է»,- նշեց Միխայիլ Բրիզգալովը:

Այնուհետև Սերգեյ Ռախմանինովի կյանքին և ստեղծագործություններին նվիրված զեկուցումներով հանդես եկան

Միխայիլ Բրիզգալովը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը, Ռուսաստանի երաժշտության ազգային թանգարանի ֆոնդերի գլխավոր փորձագետ Նատալյա Տարտակովսկայան, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Իրինա Զոլոտովան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Մարիաննա Տիգրանյանը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու Մարգարիտա Քամալյանը՝ նորովի բացահայտելով Սերգեյ Ռախմանինովին:

Կլոր սեղանը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, Ռուսաստանի երաժշտության ազգային թանգարանը և Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանության աջակցությամբ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

<< ԳԱԱ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

(Արմֆանի կազմավորումը)

1920-ական թթ. սկզբներին ստեղծվեցին Խորհրդային Հայաստանի առաջին բուհերը և գիտահետազոտական օջախները: Գիտությունը դարձավ պետական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Առաջին պլան մղվեցին գիտության այն ուղղությունները, որոնց ուսումնասիրության ոլորտն ընդգրկում էր ժողովրդատնտեսական կարևոր նշանակություն ունեցող ճյուղեր: Գիտական աշխատանքներ էին ծավալվել գյուղատնտեսության մի շարք ճյուղերի, քիմիական, երկրաբանական, կենսաբանական և բժշկական գիտությունների գծով: Հասարակագիտության բնագավառում հիմնականում ուսումնասիրվում էին հայ ժողովրդի պատմության, լեզվի և գրականության, հնագիտության և ազգագրության բազմազան հիմնախնդիրներ:

1920-1930-ական թվականներին հանրապետությունում հիմնադրվեցին նաև ակադեմիական սկզբունքով գործող ինստիտուտներ, որոնցից էին էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը (1921), ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտը (1925), ՀԽՍՀ Կենտգործկոմին կից Գիտությունների (1930) և Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտները (1931), ՀԽՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտը (1932), Լուսժողկոմատին կից ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտը (1935):

1933 թ. վերջերին Հայաստանում գործում էին 52 գիտահետազոտական հիմնարկներ և բուհեր: Գիտաշխատողների թվաքանակի անշեղ աճի մասին են վկայում հետևյալ տվյալները. 1930 թ. հանրապետությունում կային 248, իսկ 1934 թ.՝ արդեն 1060 գիտաշխատողներ: Գիտահետազոտական հիմնարկների ցանցի ընդլայնումը և գիտական կադրերի աճը 1930-ական թթ. առաջին կեսին հանգեցրին գիտական մեկ միասնական կենտրոն ստեղծելու գաղափարին: Այդպիսի կենտրոն հանդիսացավ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը, որը հիմնադրվեց 1935 թ. հուլիսին:

Մինչև 1930-ական թթ. սկիզբը ԽՍՀՄ ԳԱ գրեթե բոլոր հիմնարկները կենտրոնացված էին Մոսկվայում և Լենինգրադում: 1931 թ. հոկտեմբերին կազմակերպվեց ԽՍՀՄ ԳԱ բազաների հանձնաժողով՝ ԳԱ փոխպրեզիդենտ Վ. Լ. Կոմարովի գլխավորությամբ, որը տեղական ղեկավար մարմինների աջակցությամբ ակտիվ գործունեություն ծավալեց ազգային շրջաններում ակադեմիական հաստատությունների ճյուղավորված ցանցի ստեղծման ուղղությամբ: Մինչև 1932 թ. կեսերը հիմնվեցին ԽՍՀՄ ԳԱ հեռավորարևելյան, անդրկովկասյան և ուրալյան մասնաճյուղերը, ղազախական ու տաջիկական բազաները:

ԽՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղը՝ Զակֆանը, ստեղծվեց ԱՍՖՍՀ ժողկոմխորհի 1932 թ. նոյեմբերի 25-ի «ՍՍՀՄ ԳԱ կովկասագիտության մասնաճյուղը վերափոխելու մասին» որոշմամբ: Մասնաճյուղի առաջին

Արմֆանի նախկին շենքը (ներկայումս՝ Անդրեյ Սախարովի անվան հրապարակ)

նախագահը դարձավ մեծ գիտնական-կովկասագետ, ակադեմիկոս Ն. Յա. Մառը:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և ՀՍՍՀ ժողկոմխորհի նախաձեռնությամբ և ԽՍՀՄ ԳԱ անմիջական աջակցությամբ 1935 թ. սկզբին կազմակերպվեց Զակֆանի հայկական բաժանմունքը. ՀԽՍՀ ժողկոմխորհը փետրվարի 1-ին որոշում ընդունեց «ՀՍՍՀ–ում ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղի բաժանմունք հիմնադրելու մասին», որով նախատեսվում էր առաջին հերթին բնական և տեխնիկական գիտությունների զարգացումը: 1935 թ. մայիսի 25-ից մինչև հունիսի 1-ը տեղի ունեցած ԽՍՀՄ ԳԱ ընդհանուր ժողովի նստաշրջանը որոշեց Զակֆանի հայկական բաժանմունքը վերակազմել ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան): Սկզբնական շրջանում Արմֆանի կազմի մեջ մտան երկրաբանական, կենսաբանական, քիմիական ինստիտուտները, հողագիտության, պատմության, հնագիտության ու ազգագրության սեկտորները: 1935 թ. աշնանը ստեղծվեց բուսաբանական այգին, իսկ 1936 թ. սկզբին Արմֆանի համակարգ ընդգրկվեց Սևանի ջրակենսաբանական կայանը, 1940 թ.՝ Պետական պատմական թանգարանը: 1937 թ. հիմնվեց Պատմության և նյութական մշակույթի ինստիտուտը, 1938 թ.՝ Գրականության և լեզվի ինստիտուտը, 1939 թ.՝ Բուսաբանության ինստիտուտը, 1941թ.՝ տնտեսագիտության սեկտորը: Մասնաճյուղի նախագահությանը կից ստեղծվեց հրատարակչական բաժին, գործում էին գիտարշավային հետազոտությունների բյուրո, խմբագրական-հրատարակչական խորհուրդը, կենտրոնական գրադարանը, աշխարհագրական ու բուսաբանական ընկերությունները և այլն:

1935 թ. հուլիսի 14-ին Երևանում՝ մշակույթի տանը, տեղի ունեցավ Արմֆանի բացմանը նվիրված հանդիսավոր նիստ: Արմֆանի առաջին նախագահը դարձավ նշանավոր երկրաբան, ակադեմիկոս Ֆ. Յու. Լևինսոն-Լեսինգը, որին 1938 թ. փոխարինեց ականավոր արևելագետ-կովկասագետ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: Մասնաճյուղի գիտական հիմնարկներում աշխատում էին անվանի գիտնականներ Մ. Խ. Աբեղյանը, Հ. Ա. Աճառյանը, Հ. Հ. Մանանդյանը, Հ. Գ. Գյուլիքևխյանը, Ս. Վ. Տեր-Ավետիսյանը, Ս. Պ. Ղամբարյանը, Լ. Ա. Ռոտինյանը, Մ. Գ. Թումանյանը, Պ. Բ. Քալանթարյանը, Ս. Մ. Յուզբաշյանը, Ա. Ի. Ալիխանովը, Ա. Ի. Ալիխանյանը և ուրիշներ:

Արմֆանի նախագահ Ֆ. Լևինսոն-Լեսինգ

Արմֆանի հիմնարկներում կատարվող գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղություններն էին՝ երկրաբանություն, կենսաբանություն, բուսաբանություն, Սևանի ջրակենսաբանություն, քիմիական գիտություններ, հողագիտություն, հայոց պատմություն, հնագիտություն և ազգագրություն, հայ գրականություն և լեզու:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Արմֆանի գիտնականներն իրենց բոլոր ուժերն ու գիտելիքները նվիրեցին մեր երկրի ամրապնդման, թշնամու ջախջախման գործին: Մասնաճյուղի հիմնարկները ներգրավվեցին պաշտպանական բնույթի մի շարք առաջադրանքների կատարման գործում, լուծեցին կարևոր գիտատեխնիկական նշանակություն ունեցող բազմապիսի խնդիրներ: Պատերազմի ընթացքում զգալի օգնություն ցույց տրվեց արդյունաբերական ձեռնարկություններին՝ նոր տեխնոլոգիական խնդիրների մշակման, ապրանքների արտադրության ավելացման և տեղական հումքային բազայի ընդլայնման ուղղությամբ: 1942թ. Պատմության ինստիտուտը հիմնեց Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետ: Մինչև 1943թ. վերջը այստեղ հավաքվեց հազարից ավելի փաստաթուղթ: Կազմակերպվեց «Հայաստանի զավակների մարտական սխրագործությունները» գիտահանրամատչելի մատենաշարի հրատարակությունը:

Արդեն 1943 թ. վերջերին Արմֆանի համակարգում կային մոտ երկու տասնյակ գիտահետազոտական հիմնարկներ: Գիտաշխատողների քանակի մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը՝ 1935թ.՝ 58 հոգի, 1940թ.՝ 208: Եթե 1935 թ. ասպիրանտուրայում սովորում էր 12 հոգի, ապա 1940 թ.՝ 34:

ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ստեղծումը, անտարակույս, ակնառու իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Իր գոյության ութ տարիների ընթացքում Արմֆանի գիտական հիմնարկները զգալի աշխատանք կատարեցին գիտության տարբեր բնագավառների ուսումնասիրությունների ուղղությամբ: Արմֆանում մշակվող թեմաների արդիականությունն այն վերածեց մեր հանրապետության գիտական մտքի իսկական կենտրոնի:

Արմֆանի ձևավորման, մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի ամրապնդման, նրա հիմնարկներն անհրաժեշտ սարքավորումներով և որակյալ գիտական կադրերով ապահովելու գործում հսկայական դեր խաղաց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիան:

1943 թ. նոյեմբերին Խորհրդային Միության կառավարությունը որոշում ընդունեց ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիման վրա Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիա կազմավորելու մասին, որով նոր փուլ սկսվեց հայ ժողովրդի գիտական և մշակութային կյանքում:

Ստեփան ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ նախագահության շենքի հատակի մարմարներում հայտնաբերվել են հնագույն կենդանիների և բույսերի հետքեր

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքում՝ հատակի, աստիճանների մարմարներում և մարմարացված կրաքարերում, ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի հնէաբուսաբանության բաժնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր Իվան Գաբրիելյանը հայտնաբերել է հնագույն կենդանիների և բույսերի հետքեր:

«Այդ ապարները՝ մարմարները, ըստ ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի պալեոնտոլոգիայի և շերտագրության բաժնի վարիչ Արայիկ Գրիգորյանի, Պալեոզոյան դարաշրջանի են, իսկ մարմարացված կրաքարերը՝ ուշ մեզոզոյան: Դրանք ունեն օվկիանոսային ծագում, հատակային նստվածքների քարացուկներ են: Դրանցում պահպանվում են բրածո օրգանիզմների հետքեր, որոնք մահացել են, ընկել ծովի կամ օվկիանոսի հատակը, ժամանակի ընթացքում տվյալ նստվածքի հետ քարացել են և դարձել մի ընդհանրություն: Այնուհետև միլիոնավոր տարիների ընթացքում դարձել են ապարներ, և կենդանու կամ բույսի հետքը մնացել է ապարի մեջ, որն էլ կտրելիս և հղկելիս հայտնվում է սալիկի մակերեսին»,- ասաց Իվան Գաբրիելյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահության շենքի առաջին հարկի հատակը և աստիճանները երեսպատված են Խոր Վիրապի մարմարի Պալեոզոյան դարաշրջանի Քարածխի (359-350 միլիոն տարի առաջ) հասակի տեղավայրերից արդյունահանված սև գույնի սալիկներով: Երկրորդ հարկի հատակը երեսպատված է Իջևանի մարմարացված կրաքարերով, որոնք առաջացել են Մեզոթետիս օվկիանոսի Մեզոզոյան դարաշրջանի կավճի հասակի (մոտ 80 մլն տարի առաջ) հատակային կրաքարերից: «Երկրորդ հարկի հատակի մարմարացված կրաքարե սալիկները պարունակում են բելեմնիտների, ծովոզնիների, ծովաստղերի, երկփեղկանի ու փորոտանի փափկամարմինների, ծովաշուշանների և այլ օրգանիզմների դրոշմներ և քարացուկներ,- ասաց Իվան Գաբրիելյանը,- փորձելու ենք պարզել, թե ինչ մակերևույթ և կլիմայական պայմաններ են եղել այդ ժամանակ այս տարածքում, և օրգանիզմներն իրենց զարգացածության որ մակարդակի վրա են եղել»:

Նա նշեց, որ այսօր հնէակենդանաբանությունը կարող է կլիմայի փոփոխության վերաբերյալ բազմաթիվ հարցերի պատասխանել: «Հնէակենդանաբանությունը հավերժական ուղղություն է, ինչքան հետազոտենք, այնքան շատ բան կգտնենք: Այն, ինչ գտնում ենք ընդերքում, պետք է պահպանել և հետազոտել»,- ասաց Իվան Գաբրիելյանը:



Այս հետազոտության գաղափարը ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանինն է:

Լուսանկարներն արվել են Մոնիկա Երիցյանի, Վիկտորյա Բուռնազյանի, Արայիկ Գրիգորյանի և Իվան Գաբրիելյանի կողմից:

Հետազոտական աշխատանքներն իրականացրել է ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի հնէաբուսաբանության բաժնի վարիչ, կ.գ.դ. Իվան Գաբրիելյանը:

Աշխատանքների գիտական խորհրդատուն է ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի հնէաբանության և շերտագրության բաժնի վարիչ, ե-հ.գ.թ. Արայիկ Գրիգորյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Արվեստի պատմությանը նվիրված արժեքավոր աշխատություն



Ս/թ. մայիսի 16-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի «Արվեստի պատմություն. կերպարվեստ» դասագրքի 2-րդ հատորի շնորհանդեսը: Այն նվիրված է եվրոպական Վերածննդի դարաշրջանից մինչև XX դարի սկիզբն ընդգրկող համաշխարհային, այդ թվում՝ հայկական, կերպարվեստի համառոտ պատմությանը:

«Սա երևույթ է մեր կյանքում: Գրքի ծնունդը գիտնականի համար մեծ իրադարձություն է, առավել ևս, երբ այն նախատեսված է մատաղ սերնդի դաստիարակության համար: Արարատ Աղասյանը մեծ ոգևորությամբ և խանդավառությամբ է զբաղվել այս դասագրքի ստեղծմամբ, և այսօր մեր սեղանին է դրված կերպարվեստի պատմությանը նվիրված առաջին հայալեզու ոչ թարգմանական արժեքավոր աշխատությունը»,- ասաց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանը:

«Էջ առ էջ քննելով ստեղծագործ անհատների, երկրների, տարածաշրջանների գեղարվեստական ժառանգությունը՝ հեղինակն ի ցույց է դնում պլաստիկական մտքի համապարփակ փոխակերպումը, որը ստանում է տեղային տարբերակումներ: Այս ամենը մատուցվում է պատմամշակութային լայն համատեքստում: Մեր առջև խիստ անհրաժեշտ, իր գիտակրթական նպատակներին լիովին ծառայող հրատարակություն է, որը, անկասկած, կունենա մեծ պահանջարկ»,- ասաց ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արթուր Ավագյանը:

«Նման դասագիրքը մեր իրականության մեջ առաջամարտիկներից է: Դասագիրքն այնպես է կառուցված, որ հեղինակի և ընթերցողի միջև կարծես թե երկխոսություն է սկսվում: QR-կոդերի շնորհիվ ընթերցողները հնարավորություն են ստանում ծանոթանալու տարածաշրջանին, երկրին, հեղինակին վիրտուալ աշխարհում»,- ասաց դասագիրքը հրատարակած «Արմավ» հրատարակչության ղեկավար, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի բաժնի վարիչ Արմեն Ավանեսյանը:

«Ուսումնասիրությունը բացառիկ է և արժեքավոր արվեստի մասին բազմակողմանի տեղեկատվությամբ, տվյալ ժամանակաշրջանների պատմական, քաղաքական իրադարձությունների ներկայացմամբ, արվեստով վերջինների արտացոլմամբ»,- նշեց Երևանի պետական համալսարանի դասախոս, արվեստագիտության թեկնածու Հռիփսիմե Վարդանյանը:

«Այս հետաքրքիր, արդիական ձեռնարկը կայուն հիմք է մտածող, լայնահայաց սերունդներ կրթելու համար: Աշխատության արժանիքներից է նրա կարևոր դերն ազգային ինքնաճանաչման և ինքնարժևորման հարցում»,- նշեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու Մարգարիտա Քամալյանը:

«Սա եզակի դեպք է մեր արվեստի պատմության մեջ, և ես հույս ունեմ, որ մենք կունենանք նաև 3-րդ հատորը»,- շեշտեց արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանը շնորհակալություն հայտնեց շնորհանդեսի բոլոր մասնակիցներին և բանախոսներին՝ գնահատանքի համար:

«Արվեստի պատմություն. կերպարվեստ» դասագրքի 2-րդ հատորը լույս է տեսել ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի շրջանակներում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտում ստեղծվել է համագործակցության նոր հարթակ

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտը համագործակցության է հրավիրում տարբեր ոլորտներում գործող ընկերությունների՝ առաջարկելով իր աջակցությունը մաթեմատիկական խնդիրների լուծման գործում:

Այս նպատակով ինստիտուտում ստեղծվել է համագործակցության հարթակ, որի շնորհանդեսը տեղի ունեցավ սույն թվականի ապրիլի 6-ին: Հարթակը ստեղծված է ինստիտուտի պաշտոնական կայքում:

Շնորհանդեսին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, ակադեմիկոս Գեղամ Գևորգյանը, ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Լենսեր Աղալովյանը, ԵՊՀ պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը, ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի տնօրեն Ռաֆիկ Արամյանը, ինստիտուտի գիտաշխատողներ, «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի» տնօրեն Բագրատ Ենգիբարյանը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերությունների ներկայացուցիչներ:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանն իր ողջույնի խոսքում նշեց, որ ԳԱԱ-ում ստեղծվել է գիտական և գիտատեխնոլոգիական խոշորամասշտաբ ծրագրերի մշակման հարթակ, որի նպատակն է ձևավորել ստեղծագործական միջավայր՝ կիրառական նշանակություն ունեցող ծրագրեր գեներացնելու համար: «Մենք պետք է մասնավոր ընկերությունների հետ քննարկենք, թե ինչպես կարող ենք օգտակար լինել մեր պետությանը և տնտեսությանը: Մենք պետք է գիտությունն աստիճանաբար տանենք դեպի կիրառություն, արտադրողներին կապենք գիտնականների հետ: Եկեք համագործակցենք և օգնենք միմյանց իրագործել մեր նպատակներն ու գաղափարները»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի տնօրեն Ռաֆիկ Արամյանը նշեց. «Պետության զարգացման հիմնական գրավականը տնտեսության և գիտության համագործակցությունն է: Մեր երկրի համար դա այսօր առավել քան կարևոր է, և մենք ուզում ենք օգտակար լինել մեր պետությանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ունենք կայացած ձեռնարկություններ: Բոլորն էլ ուզում են ունենալ մրցունակ տեխնոլոգիաներ, որը ենթադրում է գիտական բաղադրիչ, և շատ հաճախ այդ բաղադրիչը մաթեմատիկական խնդիրներն են, մաթեմատիկական վերլուծությունները: Մենք պետք է ունենանք ուղիղ ճանապարհ դեպի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ: Մեր միջև պետք է սկսվի երկխոսություն, ինչն էլ ակնկալում ենք այս հարթակի միջոցով: Մնալով հիմնարար հետազոտություններում՝ պետք է օգտակար լինենք կիրառականում: Մեր նպատակներից է նաև ստեղծել հնարավորություններ՝ երիտասարդներին դեպի գիտություն, ինստիտուտներ բերելու համար»,- ասաց Ռաֆիկ Արամյանը:

Հանդիպման ժամանակ քննարկվեցին տարբեր առաջարկություններ համագործակցության ուղղությունների վերաբերյալ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ԳԱԱ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի լեզվի ինստիտուտում շուրջ 30 տարվա ընդմիջումից հետո բացվեց փորձառական հնչյունաբանության լաբորատորիան: Նախկինում այն կահավորված է եղել ձայնի ուսումնասիրման համար նախատեսված համապատասխան տեխնիկայով՝ օսցիլոգրաֆ, ինտոնոգրաֆ և այլն: Այժմ հին տեխնիկան փոխարինվել է ժամանակակից սարքավորումներով և մասնագիտական համակարգչային ծրագրերով:

Աշխարհում վերջին տարիներին փորձառական հնչյունաբանության բնագավառը մեծ զարգացում ապրեց: Այժմ կիրառվում են նոր մեթոդներ, սարքեր, ծրագրեր, որոնք հնարավորություն են տալիս թափանցելու բանավոր խոսքի չուսումնասիրված խորքերը, առաջ են քաշում նոր խնդիրներ ու հարցադրումներ, ճշտում ու պարզաբանում են հնչյունական կնճռոտ հարցեր: ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության հնչյունաբանական լաբորատորիայի հնարավորություններն այժմ թույլ են տալիս համահունչ քայլել փորձառական հնչյունաբանության արտասահմանյան նորագույն նվաճումների հետ:

Միջոցառմանն իրենց մասնակցությունն էին բերել բնագավառի վաստակաշատ գիտնականներ և մասնագետներ:

«Թվայնացումը մուտք է գործել մարդկանց կյանքի բոլոր բնագավառները՝ գիտություն, կրթություն, բիզնես, տնտեսություն, կենցաղ, հաղորդակցում, բանկային համակարգ և այլն: Այս գործընթացից դուրս չէ նաև լեզվաբանությունը, մասնավորապես փորձառական հնչյունաբանությունը: Այժմ նորագույն համակարգչային ծրագրերի շնորհիվ հնարավոր է այս նոր գործիքակազմով կարճ ժամանակահատվածում կատարել ձայնային վերլուծության մեծ աշխատանքներ»,- զրույցի ժամանակ ասաց ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանը:

«Լաբորատորիայի հիմնական նպատակը լեզվի բոլոր դրսևորումների հնչյունաբանական հետազոտություններ կատարելն է: Օրինակ, լաբորատորիան հնարավորություն կտա ոչ միայն գրական արևելահայերենի հնչյունական համակարգի փորձառական հետազոտություններ կատարելու, այլ նաև օգտակար կլինի հայերենի բարբառների հնչյունական իրողությունները, ինչպես նաև արևմտահայերենի հնչյունական համակարգն ուսումնասիրելիս»,- նշեց բաժնի վարիչ Գայանե Գրիգորյանը:

Հարկ է նշել, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի լեզվաբանության ամբիոնի «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» կրթական ծրագրի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներն իրենց գիտահետազոտական պրակտիկան անցան Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի փորձառական հնչյունաբանության նորաբաց լաբորատորիայում: Այն կարևոր նշանակություն ունի ոչ միայն լեզվի ինստիտուտի, այլ նաև հանրապետության բոլոր գիտակրթական հաստատությունների համար, որը կծառայի նաև ինստիտուտի այլ բաժիններին՝ արևմտահայերենի, ժամանակակից հայոց լեզվի և այլն, իրականացնելու հնչյունական համակարգերի փորձառական զուգադրական ուսումնասիրություններ, որոնք կբերեն հետաքրքիր եզրահանգումների և հայտնագործությունների:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ, ՀԵՐՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌՀԱՎԱՏՉՅԱՆ ԵՆ

ՄՏՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ

«ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԳԱՂԱՓԱՐ Է...»

Տարօրինակ վերնագիր է, այնպես չէ՞: Շտապենք ընթերցողին հանգստացնել. այդ խոսքերի հեղինակը մենք չենք: Բայց երբ ընթերցողն իմանա, որ դրանք պատկանում են ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին, կարծում ենք, անհանգստությունը կավելանա, քանի որ այս դժնդակ օրերում նման միտք է արտահայտում մեր ազգային դիմագիծը ներկայացնող՝ կրթության, գիտության և մշակույթի կարևորագույն բնագավառները համակարգող նախարարը:

Իսկ այս հրապարակման համար որպես վերնագիր մենք կնախընտրեինք Պարույր Սևակի խոսքերը. **«Չկա ավելի խոր զգացում, քան հայրենասիրությունը»:**

Կան համամարդկային արժեքներ, որոնք ներկայիս գլոբալացման և արևմտյան ժողովրդավարության կեղծ արժեքների պարտադրման հետևանքով աստիճանաբար դեգրադացվում են: Աշխարհաքաղաքական անբարենպաստ պայմաններում գտնվող մեր ժողովրդի ազգային ինքնությունը պահպանելու տեսանկյունից դրանք կարող են ունենալ խիստ բացասական, անգամ կործանարար հետևանքներ:

Այդ մեծագույն արժեքներից է հայրենասիրությունը, որը յուրաքանչյուրիս փոխանցվում է մեր ծնողների արյան և կաթի միջոցով, մեր հավաքական պատմական հիշողությամբ, հայոց հողի և արյան կանչով: Այնինչ տիկին նախարարը հայրենասիրության ըմբռնումը փնտրում է արևմտյան պատրաստի «կոնցեպցիաներում» և դրանցում այն չգտնելով՝ ասում է. **«Չկա հայրենասիրության կոնցեպցիա որպես այդպիսին: Հայրենասիրության կոնցեպցիան՝ ինքը, փուչիկ է»:**

Պարտադիր չէ մշտապես ղեկավարվել պատրաստի «կոնցեպցիաներով»: Կան մեծագույն արժեքներ՝ «ծնողասիրություն», «ազնվություն», «հերոսություն» և այլն, որոնք չես կարող և անիմաստ է կոնցեպտավորել: Դրանք պարզապես պետք է կրես քո մեջ:

Բայց դա դեռ ամենը չէ: Մեր զարմանքը փոխվում է զայրույթի, երբ նախարարը փորձում է խոսել բոլորիս անունից: Ահավասիկ. **«Ոչ ոք չգիտի՝ հայրենիքը ինչ է, որտեղից է սկսվում և ավարտվում»:** Եթե նա չունի այդ հարցի պատասխանը, դա դեռ չի նշանակում, որ մյուսները նույնպես չունեն: Սեփական արժեհամակարգից ծնված նման պնդումն անչափ վիրավորական է բոլորիս համար, մեր նախնյաց համար, Ավարայրից մինչև Սարդարապատ և արցախյան բոլոր մարտերում զոհված մեր հերոսների համար: Հայրենիքի սահմանները «ճշգրտելու» հարցում խորհուրդ կտայինք նրան առավել լրջորեն ուսումնասիրել հայոց հարուստ պատմությունը, մեր մեծերի թողած ժառանգությունը:

Իր հազարամյա պատմության ընթացքում մեր ժողովուրդը գոյատևել է շնորհիվ իր ոգու, լեզվի, հավատքի և հայրենասիրության: Հայրենասիրությունը վտանգավոր գաղափար կարող է լինել միայն նրանց համար, ովքեր հայրենիքը սրբություն չեն համարում, ովքեր չեն մտածում և գործում հանուն հայրենյաց: Խիստ մտահոգիչ է, թե նման մտայնությամբ ինչպես կարելի է ղեկավարել այդպիսի կարևոր բնագավառները, մասնավորապես կրթական համակարգը: Չէ՞ որ դպրոցն անփոխարինելի դեր ունի ապագա քաղաքացու կայացման և հայրենասիրության ներարկման գործում, ինչը գնահատվել է բոլոր ժամանակներում: Դա առավել անհրաժեշտ է այսօր:

Իսկ հայրենասիրությունն անտեսողներին, որոնք սովոր են պատճենել այն ամենը, ինչն արևմտյան է, հիշեցնենք հենց Արևմուտքի երկու նշանավոր քաղաքական գործիչների՝ կրթական համակարգում հայրենասիրական դաստիարակության դերին վերաբերող մտքերը: Դեռևս XIX դարում ֆրանս-պրուսական պատերազմում Գերմանիայի հաղթանակը կանցլեր Բիսմարկը համարում էր գերմանացի ուսուցչի հաղթանակը, իսկ Անգլիայի վարչապետ Չերչիլը համոզված էր, որ Ռուսաստանին հաղթելու համար նախ պետք է կործանել նրա կրթական համակարգը:

Դպրոցական նորացված դասագրքերում «ցեղասպանություն» եզրույթը փորձում են փոխարինել «կոտորածներով», Արևմտյան Հայաստանը՝ Արևելյան Անատոլիայով, թշնամի բառը՝ հակառակորդով և այլն, և այլն:

Ցավոք, տարբեր հարթակներից որոշ գործիչներ, իմաստունի կեցվածք ընդունելով, ասում են այն, ինչ մտքներին գալիս է, արհամարհելով մեր ժողովրդի արժանապատվությունն ու համբերությունը՝ շրջանառում են գաղափարներ, որոնց կենսագործման դեպքում դպրոցից կյանք կմտնեն ոչ թե հայրենասերներ, այլ ապազգայնացված կոսմոպոլիտներ՝ առանց պատմական հիշողության և ազգային հոգեկերտվածքի:

Այս հրապարակումը նախատեսել էինք տպագրել մեր թերթի ապրիլյան համարում, սակայն ՀՀ Ազգային ժողովի ապրիլի 18-ի արտահերթ նիստում ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի ելույթը ստիպեց որոշակի հավելումներ կատարել տեքստում: Նա նույնպես անդրադարձավ հայրենասիրության թեմային, ինչը մեզ բերեց այն համոզման, որ ԿԳՄՍ նախարարի մտքերը, անկասկած, իշխանությունների կողմից արդեն իսկ մշակվող ծրագրի հիմնադրույթներից են: Իսկ հայրենասիրության մասին ժառանգաբար մեզ փոխանցված պատկերացումները, պարզվում է, որ «հնացած» են:Ու քանի որ դա այդպես է, վարչապետի կարծիքով, նոր արժեքների վրա հիմնված նոր գաղափարների «հեղինակման» կարիք կա: «Հայրենասիրության պետական նոր մոդելի ստեղծումն օրակարգային անհրաժեշտություն է: ՀՀ-ն մեր ավանդական մոդելի առաջնային օբյեկտը չի եղել երբեք, և սոցիալ-հոգեբանական մակարդակում այս իրավիճակը պահպանվում է նաև այսօր: Իսկ պատճառը մեկն է. այդ մոդելի հեղինակը մենք ինքներս չենք»,- ասաց վարչապետը: Իսկ սեփական մոդելում, ըստ նրա, անհրաժեշտ է «պատմական փաստերն ու իրադարձությունները մեկնաբանել նոր դիտանկյունից»: Ընդ որում, շեշտադրվեց, որ հայրենասիրության նոր մոդելում «չեն լինելու և երբեք տեղ չեն գտնելու այլ երկրների նկատմամբ որևէ տարածքային պահանջներ»: Այս կտրուկ ձևակերպումը, պատմական իրադարձությունները «նոր դիտանկյուններից» վերաիմաստավորելու նկրտումները, անգամ Արարատ-Արագած սարերի պարզունակ հակադրության անհաջող փորձը միտված են ժողովրդի պատմական հիշողության արժեզրկմանն ու հայոց պահանջատիրության գաղափարից հրաժարմանը:

Ինչպես տեսնում ենք, հերթն այս անգամ հասել է հայրենասիրությանը:

Տևական ժամանակ է, ինչ հայտնվել ենք բազում և տարաբնույթ մարտահրավերների առջև: Երկրի համար այս ծանր փորձությունների շրջանում հաճախ օրակարգ են բերվում ժամանակավրեպ, երկրորդական նշանակության, անգամ նաև՝ արհեստածին հարցեր, որոնք ստեղծում են այլ իրականության մեջ ապրելու պատրանք. կարծես թե ոչինչ չի եղել, և ոչինչ չի կատարվում մեր շուրջը: Իշխանությունների մտածելակերպն ու գործելակերպը չեն աղերսվում իրականությանը: Այսօրվա հրամայականն է՝ կարողանալ տարանջատել խնդիրները և ողջ ներուժը նպատակաուղղել համազգային նշանակության խնդիրների լուծմանը:

ՀՀ Ազգային ժողովի մայիսի 3-ի նիստում վարչապետը կրկին անդրադարձավ հայրենասիրության թեմային և փաստորեն ձևակերպեց մի թեզ, ըստ որի, քանի որ «մենք էմոցիոնալ ժողովուրդ ենք», ապա ազգային զգացումների վրա հիմնված հայրենասիրության ներկա մոդելը կարող է վտանգել պետականության գոյատևմանը: Որպես հավելում նա նշեց. «Չվախենանք մտածելուց և համարձակ, անսպասելի մտքեր ասելուց»: Անշուշտ, մտածել պետք է, բայց և հայրենիքը չպետք է դարձնել նման մտքերի իրականացման փորձադաշտ: Հիշենք ֆրանսիացի նշանավոր պետական գործիչ Շառլ դը Գոլի խոսքերը. «Չի կարելի թույլ տալ, որ ցածր զարգացում ունեցող մարդիկ կառավարեն երկիրը, որովհետև նրանք երկիրը կհասցնեն իրենց մակարդակին»:

Հայրենասիրությունը վտանգավոր գաղափար չէ, վտանգավոր են այդ գաղափարն արժեզրկողները և այն վերաիմաստավորել ցանկացողները: Իսկ մեր ասելիքն ամփոփենք Գարեգին Նժդեհի դիպուկ խոսքերով. **«Հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ և կործանվում դրա պակասից»:**

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Ա՜խ, իմ հայրենի՜ք...
Դու՝ հազարամյա իմ ազգանո՜ւնը...
Ա՜խ, իմ հայրենի՜ք...
Ինչ կոչ են անում կյանքդ ծանաչել,–
Ավելորդ չգտում.
Ես մասն եմ կյանքիդ:
Քեզնից սկսում ու քեզ եմ հանգում՝
Շրջագծի պես...

ԱՐԴԻ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Բագրատի Աղայանի ծննդյան 110-ամյակի առթիվ

Արդեն երեք տասնամյակից ավելի է, որ մեծ լեզվաբանն ավարտել է իր երկրային կյանքը: Սակայն սփոփանք են նրա՝ արդի հայագիտության հարստություն հանդիսացող գրքերը, հոդվածները, գրախոսությունները, հրատարակված տարբեր տպագիրները, այլոց գրքերի առաջաբանները:

Տարիների հետ ավելի պարզ և հստակ, ավելի հասկանալի են դառնում հայ լեզվաբանության անխոնջ, եռանդուն մշակի վաստակն ու հունձքը:

Էդ. Աղայանը ծնվել է 1913 թ. մարտի 16-ին Մեղրիում: Սովորել է Երևանի պետական համալսարանում: Նրա գիտական գործունեությունը եղել է մի տեսակ խիզախում. այսպես, ընդամենը 28 տարեկանում՝ գիտությունների թեկնածու (1941 թ.), իսկ 32-ում՝ գիտությունների դոկտոր (1945 թ.), այնուհետև՝ պրոֆեսոր (1946 թ.), ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ (1953 թ.), գիտության վաստակավոր գործիչ (1970 թ.), ԳԱ իսկական անդամ (1982 թ.), ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ (1980, 1985 թթ.): Իսկ 1939 թ. սկսած՝ դասավանդել է ԵՊՀ-ում. 1956 թ.՝ ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնի վարիչ, նաև ղեկավարել է ԳԱ լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժինը, եղել է նախարարության բուհերի բաժնի վարիչ, ԳԱ լեզվի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, ԵՊՀ համալսարանի պրոռեկտոր (գիտական գծով), բանասիրական ֆակուլտետի դեկան:

Տասնամյակներ շարունակ դասավանդել է նաև հանրապետության տարբեր բուհերում, մշտապես եղել է պետության և գիտական հաստատությունների պատշաճ ուշադրության կենտրոնում՝ բարձր պարգևներ, արժանի կոչումներ:

Եվ այդ ընթացքում գրել է բազմաթիվ գրքեր, կազմել նոր դասագրքեր, ստեղծել բացառիկ բառարան, խմբագրել և հրատարակել ոչ միայն իր ուսուցչի՝ Հ. Աճառյանի, այլև բազմաթիվ ուրիշ գիտնականների աշխատություններ: Հայերենագիտությունն անվանի լեզվաբանի գործի միջնաբերդն էր, իսկ բանասիրականը՝ Արևելքի գրականության պատմություն, նախամաշտոցյան հայ գրի և գրականության հարցեր, տոմարագիտություն, այդ միջնաբերդի ամրակուռ պարիսպը:

Մեծ է Աղայանի վաստակը հայոց լեզվի բառարան ստեղծելու գործում: Նրա գլուխգործոցը, անշուշտ, «Արդի հայերենի բացատրական բառարանն» է, մի կոթողային աշխատություն, որ գիտական նոր մակարդակով է հայոց լեզվի բառագանձը մեկնաբանում և ներկայացնում: Բառարանն ընդգրկում է 135 հազար բառային միավոր, որից 15 հազարը նորություն է՝ գրական լեզվի երկու տարբերակի բառագանձով, որը բառագիտական-բառարանագրական մեծ արժեք է: Նրանում տեղ են գտել նաև 11 հազար դարձվածային միավորներ: Հեղինակը հանդես է բերել բառային միավորների ընտրության մեծ հմտություն, կարգային (կատեգորիալ) ստույգ նշանակում, բառի իմաստ(ներ)ի լիարժեք, մեկը մյուսից բխող առանձնացման բծախնդրություն, տերմինների և նման անվանումների բացատրության բացառիկ ճշգրտություն: Աղայանը լայն ընդգրկման հայերենագետ էր՝ բանաստեղծական հախուռն, վեհ խառնվածքով, թեև գիտական ելույթների մեջ խիստ էր, ճշգրիտ և հստակ: Բազմիցս առնչվել էր եվրոպական և արևելյան գրականության նմուշներին, կատարել էր «Հազար ու մեկ գիշերների» թարգմանությունը, «Կամելիազարդ տիկինը» պոետիկ վեպի արևելահայերեն փոխադրումը: Պարսից և այլ ժողովուրդների առավել աչքի ընկնող բանաստեղծներին գիտեր բնագրով և բերանացի:

Թերևս չկա հայերենագիտության որևէ բնագավառ, փոքրիշատե նկատելի ճյուղ, որտեղ իր ծանրակշիռ, հեղինակավոր և ուղեղնշող խոսքն ասած չլինի մեծանուն լեզվաբանը: Աղայանի աշխատությունները ներառում են հայոց լեզվի պատմությունը, բարբառագիտությունը, հայ լեզվաբանության պատմությունը: Հայ լեզվաբանական մտքի զարգացման ընթացքի կարևոր ուղենիշ է եղել նրա երկհատոր «Հայ լեզվաբանության պատմություն» (Ե., 1958-1960 թթ.) աշխատությունը: Մեծանուն համեմատաբանը մեզ է թողել հայերեն բառերի քննության և ստուգաբանության օրինակներ՝ ամփոփված «Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ» գրքում (Ե., 1974). դրանք մեծ մասամբ հիմնավոր, հավաստի և վերջնական ստուգաբանություններ են:

Հայ լեզվաբանության մեջ կա մի բնագավառ, որտեղ Աղայանն անօրինակ վաստակ ունի: Դա «Լեզվաբանության ներածություն» գրքի ստեղծումն է (Ե., 1949-1967 թթ., ռուս.՝ 1959 թ.): Տասնամյակներ շարունակ այն եղել է բուհերի դասագիրք, հրատարակվել է վեց անգամ, վերջինը «Լեզվաբանության հիմունքներ» վերնագրով՝ բարեփոխված և լրացված (Ե., 1987 թ., կա նաև համառոտ տարբերակը):

Էդ. Աղայանը գիտության մեծ երախտավոր է, բազում գրքեր է գրել՝ ի շահ իր ժողովրդի մտավոր զարգացման և առաջընթացի: Նա բազմաթիվ աշակերտներ և լեզվաբան սաներ է ունեցել, որոնք երախտագիտությամբ են հիշում նրա անունը և գիտական ժառանգությունը:

Էդ. Աղայանի ընդհանուր և հայկական բառագիտության թեմայով աշխատությունն իրավամբ մեզանում եղել է աննախադեպ, ավելին՝ մեծապես հիմք է հանդիսացել հետագա նման աշխատությունների և դասագրքերի ստեղծման: Այս ոլորտում են լեզվի տարբերակային ձևերի, տերմինների և տերմինային անվանումների մասին անվանի հայագետի տեսական աշխատությունները: Արդի հայերենի բառագիտության տեսությունն Էդ. Աղայանի հայերենագիտական մտքի արդյունքն է, մանավանդ որ նախկինում այդ ոլորտին վերաբերող հատուկ քննություններ չեն եղել:

Անվանի լեզվաբանը մեծ ներդրում ունի հայերենի բառապաշարի գիտական ուսումնասիրության մեջ՝ սկսած «Լեզվաբանության ներածություն» դասագրքում բառապաշարի տեսական վերլուծությունից ընդհուպ «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատությունը, վերջապես հեղինակի վաստակի գրավական «Արդի հայերենի բացատրական բառարանը»: Աղայանը դրանցում մշակել է հայերենի բառագիտության տեսական հիմունքները՝ լեզուների ընդհանուր բառագիտության հայեցակետ, որն, անշուշտ, նվաճում է հայերենագիտության բնագավառում:

Նա մեր օրերի այն եզակի բանասերներից էր, որ մանրազնին հետևողականությամբ անդրադարձել է նախամաշտոցյան գրի և գրականության, մեսրոպյան այբուբենի խնդիրներին, հայոց տոմարի և տոմարագիտության առանցքային հարցերին:

Վազգեն ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ.

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նոր հրատարակությունները

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը լույս է ընծայել «Նոր բառեր» Զ պրակը և «Նոր բառեր արևմտահայերէնի մէջ. Ա գիրք» բառարանը:

Ինչպես նախորդ տարիներին լույս տեսած պրակներում, այնպես էլ Զ պրակում ներկայացված են մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող բառեր, որոնք գրանցված չեն բացատրական և նորաբանությունների բառարաններում:

Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, բնագրային օրինակը, աղբյուրը: Տրվում են բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունն ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության է:

«Նոր բառեր» Զ պրակը պարունակում է շուրջ 2000 բառ, գրքի հավելվածում ներկայացվում են նաև մամուլից և համացանցից քաղված վեց տասնյակից ավելի նորակերտ տառային հապավումներ: Կատարվող աշխատանքով հնարավոր է դառնում դիտարկել հայոց լեզվում տեղի ունեցող բառակազմական գործընթացները, միտումները, որոշ չափով նաև իրականության մեջ առկա զարգացումները:

«Ոչ միայն լեզվաբանական, այլ նաև բազմաթիվ առումներով անհրաժեշտ է շարունակաբար գրանցել լեզվի բառապաշարում տեղի ունեցող տեղաշարժերը, գրառել ու մեկնաբանել նորակազմ բառերը: Այդ նպատակով Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժինն արձանագրում է մերօրյա խոսքում դրսևորվող նորաբանությունները, դրանք մեկնաբանություններով, օրինակներով և համապատասխան հղումներով ներկայացնում է տարին մեկ անգամ հրատարակվող «Նոր բառեր» վերնագրով պրակներում»,- նշեց լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի վարիչ Անահիտ Գալստյանը:

«Նոր բառեր» շարքը հասցեագրված է հայոց լեզվի բառագիտությամբ հետաքրքրվող մասնագետներին, ուսուցիչներին, ուսանողներին, լրագրողներին, հրատարակիչներին, թարգմանիչներին:

«Նոր բառեր» շարքի նմանությամբ ինստիտուտը սկսել է ծրագիր իրականացնել նաև արևմտահայերենի բառապաշարի զարգացումները դիտարկելու ուղղությամբ: Ինստիտուտի հրատարակած «Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ. Ա գիրք» բառարանն ընդգրկում է շուրջ 1000 նորակազմ բառ, որոնք արևմտահայերենի որևէ բառարանում վկայված չեն եղել:

«Բառերը քաղված են արևմտահայերեն արձակ ու չափածո ստեղծագործողների գրքերից, տարբեր ամսագրերից, թերթերից: Բառարանում գլխաբառից հետո նշվում են բառի խոսքիմասային պատկանելությունը, մասնագիտական ոլորտը, տրվում են բառի բացատրությունը՝ արևմտահայերեն և արևելահայերեն, օրինակը և աղբյուրը: Բառարանը գալիս է վկայելու, որ գրական արևմտահայերենը, չնայած դժվարություններին, շարունակում է ոչ միայն գործածվել, այլ նաև ժամանակին համընթաց զարգանալ ու հարստանալ»,- ասաց ինստիտուտի արևմտահայերենի բաժնի վարիչ Սուսաննա Տիոյանը:

Արևմտահայերենի նորակազմությունները ներկայացնող բառարանաշարն օգտակար կլինի ոչ միայն արևմտահայերենի բառագիտությամբ ու բառակազմությամբ հետաքրքրվող մասնագետներին, այլև ուսանողներին և ուսուցիչներին:

Աշխատությունները ստեղծվել են ինստիտուտի բազային ֆինանսավորմամբ՝ «Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Աստղագիտության նվիրյալը

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լյուդվիգ Միրզոյանի ծննդյան 100-ամյակի առթիվ

Անվանի աստղաֆիզիկոս Լյուդվիգ Վասիլի Միրզոյանը ծնվել է 1923 թ. մայիսի 1-ին Երևանում: Նրա ծնողները Իրանի Ատրպատականի շրջանի Մակու քաղաքից էին և սերտ ազգակցական կապեր ունեին հայ նշանավոր մշակութային գործիչների հետ: Լ.Վ. Միրզոյանի պապը՝ Մարգար Միրզոյանը, եղիշե Չարենցի մոր՝ Թեկղի Միրզոյանի (Թելլի Միրզայան) եղբայրն էր, իսկ մայրը՝ Անուշ Ավդալբեգյանը, նշանավոր հայագետ Թադևոս Ավդալբեգյանի քույրն էր: Վաղ մանկությունից զրկվելով հորից, հաղթահարելով կենցաղային և հոգեբանական բազում արգելքները՝ Լ. Վ. Միրզոյանին այնուամենայնիվ հաջողվում է ընդունվել և ավարտել ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ ստանալով մաթեմատիկոսի մասնագիտացում: 1947 թ. նա առաջարկություն է ստանում ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի կողմից աշխատելու Բյուրականի նորաստեղծ աստղադիտարանում: Զուգահեռաբար սկսվում է նաև մանկավարժական գործունեությունը:

1951 թ. Վ. Համբարձումյանի և Օլեգ Մելնիկովի համատեղ ղեկավարությամբ Լ. Վ. Միրզոյանը պաշտպանում է վաղ սպեկտրալ դասի աստղերի սպեկտրալուսաչափական ուսումնասիրությանը նվիրված ատենախոսությունը և ստանում ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1953 թ. Լ. Վ. Միրզոյանը նշանակվում է Բյուրականի աստղադիտարանի գիտական քարտուղար, իսկ 1959 թ.՝ տնօրենի տեղակալ, այդ պաշտոնում աշխատելով մոտ 30 տարի: Այդ ընթացքում Բյուրականի աստղադիտարանը միջազգային ճանաչում է ստանում և դառնում աշխարհի լավագույն աստղադիտարաններից մեկը՝ արժանանալով ՍՍՀՄ կառավարական բարձր պարգևի՝ Լենինի շքանշանի: 1965 թ. Լ.Վ. Միրզոյանը ղեկավարել է Բյուրականի աստղադիտարանի աստղերի և միգամածությունների ֆիզիկայի բաժինը: Նույն թվականին հիմնադրվում է «Աստղաֆիզիկա» համամիութենական հանդեսը, որտեղ նա նշանակվում է գլխավոր խմբագրի՝ Վ. Համբարձումյանի տեղակալ, իսկ 1988 թ.՝ գլխավոր խմբագիր: 1990-ականներին՝ երկրի համար ծանր տարիներին, հիմնականում նրա մեծ ջանքերի շնորհիվ հանդեսը շարունակեց տպագրվել: Լ.Վ. Միրզոյանը եղել է Հայկական սովետական հանրագիտարանի գիտահրատարակչական խորհրդի անդամ, աստղագիտական բնույթի հոդվածների մեծ մասի հեղինակը: 1968 թ. Լ.Վ. Միրզոյանը Լենինգրադում պաշտպանում է դոկտորական ատենախոսությունը՝ նվիրված երիտասարդ աստղերի ֆիզիկային և կինեմատիկային: Նրան շնորհվում է գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1970 թ. Լ.Վ. Միրզոյանն ընտրվում է Աստղագնացության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ, 1986 թ.՝ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1996 թ. ընտրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 1974 թ. նա արժանացել է Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման: Լ.Վ. Միրզոյանի գիտական, գիտակազմակերպչական, մանկավարժական և խմբագրական գործունեությունը բազմիցս արժանացել է միութենական, հայրենական և միջազգային կառույցների բարձր գնահատականին:

Լ.Վ. Միրզոյանի գիտական գործունեության սկիզբը համընկավ երկու նշանակալի, ժամանակակից աստղաֆիզիկայի զարգացման համար բախտորոշ իրադարձությունների հետ: Առաջինը Բյուրականի աստղադիտարանի հիմնադրումն էր, երկրորդը՝ Վ. Հ. Համբարձումյանի կողմից աստղառաջացման օջախների՝ աստղասփյուռների հայտնագործումը: Աստղասփյուռների հայտնագործումը եզակի հնարավորություն տվեց հստակորեն առանձնացնելու աստղերի զարգացման վաղ փուլերը և անմիջականորեն զբաղվելու դրանց ուսումնասիրությամբ: Բնականաբար, Բյուրականի աստղադիտարանը դարձավ այդ ուսումնասիրությունների հիմնական և առաջատար կենտրոններից մեկը: Աստղասփյուռների և նրանց աստղային բնակչության ուսումնասիրությունը դարձավ նաև Լ.Վ. Միրզոյանի գիտական գործունեության հիմնական առանցքը: Օգտագործելով իր կողմից մշակված և ներմուծված «սինթետիկ աստղասփյուռի» գաղափարը և աստղերի «ծերացման» ֆունկցիան՝ Լ.Վ. Միրզոյանին հաջողվեց ստանալ աստղասփյուռների և աստղերի էվոլյուցիային վերաբերող մի շարք հիմնարար արդյունքներ:

1970-ական թվականների սկզբից Լ.Վ. Միրզոյանի գիտական աշխատանքներում առանցքային է դառնում անկայուն աստղերի, մասնավորապես կարմիր թզուկ աստղերի, հատկապես բռնկվող աստղերի, ուսումնասիրությունը: Լ.Վ.Միրզոյանը դարձավ միջազգային ծրագրի շրջանակներում կատարվող այդ ուսումնասիրությունների փաստացի ղեկավարը: Նրա անմիջական ղեկավարությամբ Հայաստանի, Վրաստանի, Ուզբեկստանի, Ղազախստանի, Բուլղարիայի, Հունգարիայի աստղագետները հաջողությամբ իրականացրին բռնկվող աստղերի համակարգերի՝ Օրիոն, Բազումք, Մսուր և այլն, ինչպես նաև Արեգակի շրջակայքի բռնկվող աստղերի համալիր ուսումնասիրությունը: Այդ բնագավառում Լ.Վ. Միրզոյանի և նրա աշխատակիցների կողմից ստացվել և հաստատվել են կարևորագույն արդյունքներ:

Ակադեմիկոս Լ. Միրզոյանը գիտական բազմաթիվ արժեքավոր աշխատությունների հեղինակ է: Իր մենագրություններում, մասնավորապես «Нестационарность и эволюция звезд» գրքում, նա առավել ամփոփ ներկայացրել է բյուրականյան աստղագիտական դպրոցի հաջողությունները և նրա հիմնադրի՝ Վ. Հ. Համբարձումյանի ներդրումը և դերը ժամանակակից աստղաֆիզիկայում:

Լյուդվիգ Վասիլի Միրզոյանը Բյուրականի աստղադիտարանը և բյուրականյան ուղղությունը հիմնադրած հայ աստղագետների համաստեղության լավագույն ներկայացուցիչներից է:

Անուրանալի է նրա ավանդը հայրենական ու համաշխարհային աստղագիտության մեջ:

Վ. Միրզոյանը վախճանվել է 1999 թ.: Նրա հիշատակը հավերժացնող հուշաքար է փակցված Աղայան փողոցի այն տանը, որտեղ բնակվել է նա:

ՀՀ ԳԱԱ Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան
«Աստղաֆիզիկա» հանդեսի խմբագրություն

ՀՐԱՇԱԼԻ ԿԵՆՍԱՊԱՏՈՒՄ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, անվանի տնտեսագետ, նկարիչ, մանկավարժ, Սյունյաց աշխարհի լավագույն զավակներից մեկը՝ Գրիգոր Ալեքսանի Ղարիբյանը, այսօրվա հայ հասարակությանն ու եկող սերունդներին կտակել է ճանաչողական մեծ արժեք ունեցող իր կենսապատումը: Այն վերնագրված է «93-ամյա կենսագրական էջեր»:



Կենսապատումը ներկայացնում է նրա կյանքի հաճախ դժվարին դրվագներ ունեցող ուղին, որն ինքը հաղթահարել է նպատակաուղղվածությամբ և, անշուշտ, կենսասիրությամբ:

Գրիգոր Ղարիբյանի կյանքի պատմության գործող անձինք Հայաստանի գիտական, մշակութային, քաղաքական կյանքում նշանակալի դեր կատարած մարդիկ են՝ գերակշիռ մասը ծագումով Սյունյաց աշխարհից:

Այս գրքում պարզորոշ տրված է հեղինակի կյանքի ընթացքը՝ Խորհրդային Հայաստանում և դրան հետևած անկախության տարիներին:

Նրա մանկության տխուր էջերից է 1938 թ. Ալեքսան հայրիկին կուլակաթափ անելն ու մեկ տարի Գորիսի բանտում պահելը: Իսկ ամենամեծ ողբերգությունն իր սիրելի կնոջ՝ Գայանեի մահը, որը հեղինակի կյանքի բոլոր դժվարությունների ժամանակ եղել է հաստատուն հենարան:

Երկրորդ մեծ վիշտը Գրիգորի ավագ եղբայրների՝ Երվանդի ու Հայկազի զոհվելն է Հայրենական մեծ պատերազմում:

Գիտականորեն ապացուցված է, որ մարդկանց չնչին տոկոսն ունի երախտագիտության այնքան կարևոր զգացումը: Այս գիրքը լի է երախտագիտության խոսքերով՝ ուղղված բոլոր այն մարդկանց, որոնք գիտնականի կյանքում աջակցել են նրան:

Անշուշտ, ապագա տնտեսագետի կյանքում կարևոր դեր են կատարել Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան համալսարանում սովորելու տարիները, որոնց ժամանակ մշտապես իր կողքին է եղել սիրելի կինը՝ Գայանեն:

Կյանքի հասուն տարիքում Գրիգոր Ղարիբյանը վերադառնում է իր պատանեկան տարիների երազանքին՝ նկարչությանը, և սկսում է վրձնել հայրենի Սյունիքի բնաշխարհը: Մի քանի անգամ Երևանում բացվել է նրա նկարների ցուցահանդեսը: Գրքում կարելի է տեսնել գիտնականի հրաշալի բնանկարներն ու ծաղկային կոմպոզիցիաները: Ընդհանրապես գիրքն աչք է շոյում բազմաթիվ գունավոր նկարներով: Գիրքը յուրօրինակ հանրագիտարան է:

Գրքի էջերից իմանում ենք, որ Հայաստանի գիտության մեջ՝ որպես Սյունիքի պարծանք, նա պաշտում է միջազգային հռչակ ունեցող Նիկողայոս Ադոնցին, իսկ ժամանակակից գրականության մեջ նրա սիրելին Համո Սահյանն է, որին նվիրված հոդված ունի «Սյունյաց աշխարհ» թերթում:

Ղարիբյանի պաշտելի անձերից մեկը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանն է՝ այն հայը, որն առանց վախենալու Միխայիլ Գորբաչովի դեմքին խիզախորեն նետեց պայքարի ձեռնոց՝ հանուն Արցախի ազատագրման:

Մի առանձին բաժին գրքում ներկայացնում է Գ.Ղարիբյանին սրտամոտ գեղանկարիչներին, քանդակագործներին: Դրանց մեջ են տաղանդաշատ նկարիչ Զախար Խաչատրյանն ու քանդակագործ Արտաշես Հովսեփյանը: Նրա սիրելիներից է նաև նկարիչ Փարավոն Միրզոյանը:

Ներկայացված են նաև Սյունյաց աշխարհից սերված գործիչներ Հայաստանի Կոմկուսի I քարտուղար Սուրեն Թովմասյանը, II քարտուղար Մուշեղ Ադոնցը, ՀՀ արհմիությունների խորհրդի նախագահ Մարտին Հարությունյանը, Երևանի քաղսովետի նախագահ Գրիգոր Հասրաթյանը և այլք:

Գրքում առանձին բաժին են կազմում արմատներով սյունեցի գիտնականները՝ Նիկողայոս Ադոնց, Կարապետ Մելիք-Օհանջանյան, Հրանտ Ադոնց, Էդուարդ Աղայան, Հրաչիկ Սիմոնյան, Մորուս Հասրաթյան, Լենդրուշ Խուրշուդյան, Արամ Սիմոնյան, Մուշեղ Ադոնց, Մուրադ Հասրաթյան, Ալելիտա Դոլուխանյան, Արարատ Աղասյան:

Կենսապատումում առանձին բաժին է նվիրված աշխարհահռչակ միկրոքանդակագործ, նկարիչ, արվեստագետ, ջութակահար Էդուարդ Տեր-Ղազարյանին, որի ծնողները Սիսիանից էին:

Գրքում զետեղված են Գրիգոր Ղարիբյանի 80, 85, 90-ամյակների առիթով հանրապետական մամուլում հրապարակված հոդվածները, պարգևատրման նկարներն ու շնորհավորական ուղերձները:

Գրախոսականն ուզում եմ ավարտել գիրքը եզրափակող «Վերջաբանի փոխարեն» հատվածով:

«Ավարտեցի «93-ամյա կենսագրական էջեր» գիրքս: Ամենաթանկ էջը ինձ համար չորրորդ էջն է, որտեղ զետեղված են Հայրենական մեծ պատերազմում զոհված, դեռ չամուսնացած եղբայրներիս՝ Երվանդի և Հայկազի զինվորական հագուստներով նկարները և իմ «Կակաչ» գեղանկարը…

Պատերազմները միշտ էլ հազարավոր զոհված երիտասարդներով մեծ վիշտ են պատճառել իրենց հարազատներին: Ո՞րն է մեր փրկությունը:

…Թշնամիներով շրջապատված Հայաստանը գոյատևելու, զարգանալու համար պետք է ամեն գնով ստեղծի շողացող թուրուժեղ զինված բանակ և ուժեղ դպրոց: Դա է մեր փրկությունը»:

Ալելիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ստեղծագործում են մեր գիտնականները

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀՐԱԺԱՐԻ՞Մ Ի ՍԱՏԱՆԱՅԷ

Նա չի տեսնվում, որտե՞ղ է նստած,
Որտե՞ղ է նա իր պոչը թաքցնում.
Ամբոխի մեջ է, հրապարակում,
Աղաղակներում ու համախմբված
Ճիչ ու կանչերում մեծամասնության,
Բողոքավորի արտասուքներում,
Ընկածի կողքին անտես ուրվական,
Նրա վիրավոր սրտի ցավերում,
Ճանապարհներին, ինչպես մուրացկան,
Հեծեծանքներով համառ ու տոկուն,
Արժանավայել ու անօգնական,
Աստծո տան դռան մոտերքում է միշտ,
Նրա ծառայի աղոթքում անգամ
Չուկ է որսում նա լեզվի ջրերում,
Արդարախոս է ու անաչառ է
Նիստում, ժողովում, խորհրդարանում,
Սեղանների մոտ, բաժակաճառում
Թաթախում է իր լեզուն ամեն պահ
Պճնվում, քծնում, եղծում ու պղծում
Ամեն գաղափար, անցյալ ու ներկա:
Բացահայտ է նա, մեր աչքերը կույր,
Ու թղթի մաքուր, պարզ ճերմակության
Ամայության մեջ զգույշ ենք որքա՞ն.
Տեսնու՞մ ենք նրան մեր գրչի ծայրին
Ու լռության մեջ ակադեմիական:

ՀԵՏԱ-ՔՐ-ՔՐԱՇԱՐԺ ԴԵՊՔԵՐ

Ալեքսանդր Մակեդոնացին և հայկական լավաշը

Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհանվաճ արշավանքն անցավ Հայաստանի կողքով: Բայց և այնպես Եփրատն անցնելիս նա պաշարեց հայկական մի բերդ: Մակեդոնական բանակը երեք օր շարունակ գրոհ ձեռնարկեց, սակայն ամրոցը մնաց անառիկ: Չորրորդ օրը բերդի աշտարակից հայերը կախեցին մի լավաշ:

- Հայերն անձնատուր են լինում,- զեկուցեցին զորավարին:
- Ինչպե՞ս,- հարցրեց Ալեքսանդր Մակեդոնացին:
- Նրանք լավաշ են կախել բերդի աշտարակից:
- Լավաշն ի՞նչ բան է:
- Հայկական նրբաթերթ հաց:
- Անձնատուր լինողը սպիտակ դրոշ կկախի և ոչ թե լավաշ: Նրանք հաշտություն ու խաղաղություն են առաջարկում: Հայերն ուզում են ասել, թե մարդն աշխարհ է եկել հաց ուտելու ու ապրելու և ոչ թե զենք վերցնելու ու կռվելու համար:
- Հիմա ի՞նչ անենք, զորապե՛տ:
- Վերացրե՛ք պաշարումը և շարժվե՛ք առաջ: Թող հացապաշտ հայերը վայելեն իրենց հացն ու խաղաղությունը: Հացի դեմ չի կարելի նիզակ ճոճել: Աստվածները յոթ տարի շուտ են մահ պարգևում նրան, ով կռիվ է գնում հացի դեմ,– ասաց Ալեքսանդր Մակեդոնացին:

Դավիթ Անհաղթ

Բյուզանդիայի քաղաքամայր Կոստանդնուպոլսում իմաստասերների մրցավեճ էր: Նրանց մեջ էր քերթողահայր Մովսես Խորենացու քրոջորդի Դավիթը:

Չորս ժամ անընդմեջ նա պատասխանում էր բյուզանդացի գիտունների բազմաթիվ ու բազմաբնույթ հարցերին: Անպատասխան չէր թողել և ոչ մի հարցում, ու թվում էր, թե նա հաղթում է իմաստասիրական ճակատամարտում: Բայց ահա մրցավեճի ղեկավարն ասաց.

- Դավի՛թ, դու փայլեցիր քո իմացությամբ ու պերճախոսությամբ: Մնաց մի պայման: Եթե դու անմիջապես պատասխանես վերջին հարցին, ապա քեզ կօծենք իմաստասեր: Այն ի՞նչ բան է, որից մարդիկ երբեք չեն ձանձրանում:

Դավիթը պատասխանեց.

- Հացը: Ամեն տեսակի ուտելիք, ինչքան էլ այն համեղ լինի, կարող է ձանձրացնել մարդուն, իսկ հացը՝ երբեք: Ինչ էլ ուտես, առանց հացի չես կշտանա: Հացը մարդուն պետք է ամեն օր: Հացը աշխարհում չի ձանձրացրել և ոչ մի մարդու:

- Ճիշտ է,- ասաց մրցավեճի գլխավորը:

Այս ու այն կողմից վրա տվին.

- Նա անհաղթ է, նա անհաղթ է...
- Անվանենք նրան Դավիթ Անհաղթ:

Այդ մրցավեճից հետո հայ իմաստասերը կնքվեց Դավիթ Անհաղթ անունով:

ՓՈՔՐԻԿ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԱՍԻՆ

ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ

АРМЕНИЯ В СУДЬБЕ ДЖОРДЖА БАЙРОНА

Բանասիրական գիտությունների թեկնածու, հայ բայրոնագետ Անահիտ Բեքարյանի «Армения в судьбе Джорджа Байрона» (изд. «Гитутюн» НАН РА, Е., 2023) գիրքը սիրո և երախտագիտության խոստովանություն է՝ հասցեագրված մասնագետներին և հասարակության լայն շերտերին:

Մենագրությունը լրացնում է անգլիացի բանաստեղծի ստեղծագործական հանճարին նվիրված բազմաթիվ հետազոտությունների շարքը, բանաստեղծի, որի ռոմանտիզմը նույնչափ արդիական է և հավերժ, որչափ հավերժ են մարդկային ոգու արարումներն ու սխրանքները:

Գիրքը հետաքրքիր է և արժեքավոր ինչպես նյութերի բազմաշերտությամբ, այնպես էլ կառուցվածքային առումով. այստեղ ներկայացված են նյութեր՝ նվիրված Բայրոնի և Մխիթարյանների միաբանության համագործակցությանը, նրա հայկական նամականին, հայագիտական հետազոտությունները, հայ գրական-հասարակական միտքը բանաստեղծի մասին: Ըստ էության, Ա. Բեքարյանի հետազոտությունը յուրօրինակ փոքրածավալ հանրագիտարան է, որտեղ ընդգրկված է գրողի կյանքի՝ հայ իրականության հետ կապված ժամանակաշրջանը, որն անմար հետք թողեց նրա մտքում և սրտում:

«Եվրոպական քաղաքակրթությունից հոգնած» բանաստեղծը մտերմացավ Մխիթարյան միաբանության անդամների հետ ու Հարություն Ավգերյանի շնորհիվ հաղորդակից դարձավ հայ մշակույթին ու պատմությանը, թարգմանեց հայ պատմիչների գործերը և հայ պոեզիայի անկրկնելի աշխարհը ճանաչելու նպատակով սկսեց ուսանել հայերեն: Մխիթարյանների հետ համագործակցության արդյունքը դարձավ անգլո-հայկական (1817 թ.) և հայ-անգլիական քերականական ձեռնարկների հրատարակումը: Ի դեպ, Բայրոնն առանձնահատուկ հետաքրքրություն էր տածում հայոց պատմության հանդեպ. դրա մասին են վկայում նրա թարգմանությունները Մովսես Խորենացու «Պատմություն հայոց» և Ներսես Լամբրոնացու «Հռետորաբանություն» գործերից:

Գիրքը փաստում է, որ Բայրոնի սերը Հայաստանի և հայ մշակույթի հանդեպ միակողմանի չէր: «Բայրոնիզմը»՝ իբրև երևույթ, իր արտացոլումը գտավ նաև հայ գրականության մեջ, քանզի բանաստեղծի ազատասիրությունը և մտածողության տիեզերքը համահունչ էին հայ մշակույթի ներկայացուցիչների աշխարհընկալմանը: Պատահական չէ, որ բանաստեղծի առաջին թարգմանիչներից մեկը՝ Ղևոնդ Ալիշանը, նրան անվանել է դարաշրջանի լավագույն պոետ, որին հիացմունքի տողեր են ձոնել Ռուբեն Որբերյանը, Վահրամ Թորգոմյանը, Եղիա Փեչիկյանը, Մառի Աթմաճյանը, Նաիրի Զարյանը, Հրաչյա Հովհաննիսյանը և այլք:

Հետազոտության մեջ միահյուսված են քննվող ժամանակաշրջանի գրական-քաղաքական միտումները, դրանց դրսևորումներն ու անջնջելի հետագիծը Բայրոնի ստեղծագործական ճակատագրում:

Անգլիական մշակույթի առանցքային ներկայացուցչի ֆենոմենին հայ ընթերցողը ծանոթացավ արևմտահայ մամուլի էջերից, որն արձագանքում էր նրա գրչին պատկանող յուրաքանչյուր ստեղծագործության:

Այսպիսով, Անահիտ Բեքարյանին հաջողվել է ստեղծել Բայրոնի կյանքին ու ճակատագրին նվիրված մի գողտրիկ խճանկար՝ ուրույն հայ «բայրոնապատում», որը նոր երանգ հաղորդեց բանաստեղծի մտքի և գործի բացահայտմանն ու գնահատմանը դարերի խորքից եկող հայ մշակույթի միջոցով:

Հարկ է նշել նաև գրքի նրբաճաշակ ձևավորումը և բարձրորակ տպագրությունը «Գիտություն» հրատարակչության կողմից:

Գայանե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ գրողների և ժուռնալիստների միությունների անդամ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը հայտարարում է մրցույթ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը համալրելու համար:

Գործադիր մարմնի պաշտոնի համար հայտարարված մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող, կազմակերպության մասնագիտական ուղղվածությանը (ուղղություններից մեկին) համապատասխան գիտական աստիճան ունեցող, գիտակազմակերպական փորձ ունեցող, 65 տարին չլրացած անձը:

Հավակնորդը պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնի թափուր հաստիքի մրցույթին մասնակցելու համար փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է՝

1) լրացված դիմում, որտեղ նշվում են առնվազն հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, որոնց իսկությունը և հասանելիությունը ստուգվում են անմիջապես,

2) ինքնակենսագրություն,

3)անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակների սկանավորված տարբերակը),

4) 2 գունավոր լուսանկար՝ 3 x 4 չափսի (էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ էլեկտրոնային),

5)բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները) (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը),

6) օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը)՝ առկայության դեպքում,

7) գիտական աստիճանը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը),

8) աշխատանքային գործունեությունը հավաստող տեղեկանք վերջին աշխատանքի վայրից (փաստաթուղթ),

9) առաջադրումը հաստատող փաստաթուղթ՝ առկայության դեպքում,

10) կազմակերպության զարգացման ծրագիր,

11) հրատարակված աշխատությունների և հոդվածների ցանկ:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում ներառված պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածություն առաջադրելու իրավունք ունեն կազմակերպության գիտական անձնակազմը, համապատասխան բաժանմունքի բյուրոն և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները:

Հավակնորդները վերոնշյալ փաստաթղթերը հայտարարության հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում (մայիսի 26-հունիսի 26) ներկայացնում են ՀՀ ԳԱԱ կադրերի բաժին հետևյալ հասցեով՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24, հեռ. 52-70-51 կամ էլեկտրոնային եղանակով հետևյալ էլեկտրոնային փոստին՝ persdep@sci.am:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը հայտարարում է մրցույթ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը համալրելու համար:

Գործադիր մարմնի պաշտոնի համար հայտարարված մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող, կազմակերպության մասնագիտական ուղղվածությանը (ուղղություններից մեկին) համապատասխան գիտական աստիճան ունեցող, գիտակազմակերպական փորձ ունեցող, 65 տարին չլրացած անձը:

Հավակնորդը պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնի թափուր հաստիքի մրցույթին մասնակցելու համար փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է՝

1) լրացված դիմում, որտեղ նշվում են առնվազն հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, որոնց իսկությունը և հասանելիությունը ստուգվում են անմիջապես,

2) ինքնակենսագրություն,

3)անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակների սկանավորված տարբերակը),

4) 2 գունավոր լուսանկար՝ 3 x 4 չափսի (էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ էլեկտրոնային),

5)բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները) (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը),

6) օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը)՝ առկայության դեպքում,

7) գիտական աստիճանը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը),

8) աշխատանքային գործունեությունը հավաստող տեղեկանք վերջին աշխատանքի վայրից (փաստաթուղթ),

9) առաջադրումը հաստատող փաստաթուղթ՝ առկայության դեպքում,

10) կազմակերպության զարգացման ծրագիր,

11) հրատարակված աշխատությունների և հոդվածների ցանկ:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում ներառված պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածություն առաջադրելու իրավունք ունեն կազմակերպության գիտական անձնակազմը, համապատասխան բաժանմունքի բյուրոն և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները:

Հավակնորդները վերոնշյալ փաստաթղթերը հայտարարության հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում (մայիսի 26-հունիսի 26) ներկայացնում են ՀՀ ԳԱԱ կադրերի բաժին հետևյալ հասցեով՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24, հեռ. 52-70-51 կամ էլեկտրոնային եղանակով հետևյալ էլեկտրոնային փոստին՝ persdep@sci.am:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4,
հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 24.05.2023 թ.:
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА